



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

L 4 n
1434-1441

1-50

1999

ԿՐԹԱՐԱՆ
ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԲԱՆԻՑ

ԳՐԱՍ Զ.

ԱՐՏԱՍՈՒՔ ԵՒ ԵՐԳ

Ի

Մ. ՎԱՐԻԱՊԵՏԵ ՄՈՒՐԱՏԵԱՆՆՑ
ՅԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՈՒԻՏԷ Ս. ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

ՀՐԱՄԱՆԱԻ

ՊԱՏԻԱՐԲԻ ՍՐԲՈՑ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

Տ. ԵՍԱՅԵԱՅ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿԱՊՈՍԻ



ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

1875

Կ Բ Թ Ա Ր Ա Ն
ԱՌԵՏԱՐԱՆԿԱՆ ԲԱՆԻՑ

Գ Ա Ս Զ .

Ա Ր Տ Ա Ս Ո Ւ Ք Ե Ի Ե Ր Գ

« Ո՞ր նմանեցուցից զազգս զայս . նման է մանկուոյ՝ որ նստիցին ՚ի հրապարակս , կարգայցեն զընկերս իւրեանց , և ասիցեն . Փողս հարար ձեզ՝ և ո՛չ կարախիջիք . սղբացար ձեզ՝ և ո՛չ կոծեցարուք : Եկն Յովհաննէս , ո՛չ ուտէր և ո՛չ բմցէր , և ասն . Դեւ թս ՚ի նմա : Եկն Որդի մարգոյ՝ ուտե և բմցէ , և ասն . Ահա՛ ոչր կերող և արբեցող . բարեկամ մարտաւորաց և մեղաւորաց , և արգարացաւ իմաստաւ թիւն յորդուց իւրոց » : Մատթ . ԺԱ . 16—19 :

ԱՒԱՆԱՆՔԻ, ԹԱՆՆԻՔ մտօք այն նշանաւոր դարն , յորում Յովհաննէս Մկրտչի պաշտօնն կ'աւարտի և Յիսուսի Քրիստոսի պաշտօնն կը սկսի : Կանգ առնուէք այն երեքուն սահմանին վերայ , ուր նախընթաց Կարապետի վերջին ճառագայթներն տակաւ առ տակաւ կը խորասուզին եւ կ'անհետին

Գ 1439-60

38. 1442

Արդարութեան Արեգական (Յիսուսի) նորանշջլ և գեղափայլ արշալուսոյ մէջ: Երուսաղէմ երկու մարգարէներ ունի իւր առջեւ, յորոց հինն կը խոնարհի, կը մեղմանայ նորեկին առջեւ, և սա կայն նորեկն, բազմութեան հետ խառնուելով, կը խնդրէ մկրտիլ իւր Նախընթացէն այն մկրտութեամբ, որով կը մկրտէ նա ապաշխարութեամբ առ ինքն դիմադներն: Բայց ՚ի զուր սոյն երկու մարգարէքն փոխադարձ կը վխտեն իրարու համար. ժողովուրդն բան չը հասկնար սոյն համաձայն վկայութենէն: Ընդհակառակն՝ ժողովուրդն այնպէս կը կարծէ, որ սոյն երկու մարգարէքն բարորոյին իրարու ներհակ են, թէ՛ վարդապետութեամբ և թէ՛ բարոյականութեամբ. մին խառութեամբ՝ մինչև բրտութեան հասած է, և միւսն ներդրութեամբ՝ մինչև յետին ծայր թուլութեան: Վասն զի, մինն ո՛չ կուտէ և ո՛չ կ'ըմպէ, և միւսն կ'ուտէ և կ'ըմպէ մինչև անգամ մաքսաւորաց և մեղսւորաց հետ: Եւ ոյովհետև ժողո-

վըդեան կարծիքով սոյն երկու մարգարէքն եւս կը չափազանցին իրենց բռնած ընթացքին մէջ, և երկոքեան ևս, թէ և տարբեր եղանակաւ, կը հեռանան ուղիղ բանէ և ճշմարտութենէ. ուստի ժողովուրդն երկուսն եւս կը մերժէ, չընդունիր, ակնունելով անշուշտ մի աւելի լուսաւոր և իմաստուն վարդապետի, որ գայ և քարոզէ միջին ուղիղ ճանապարհաւ, առանց երկու ծայրայեղութեանց դիմելու: Այսպէս ուրեմն, ո՛չ խստակեցութիւնն եւ ո՛չ ներող գթութիւնն ընդունելութեան չեն արժանանար ժողովրդեան կողմէն: Թէ՛ Յովհաննէս Մկրտիչն և թէ՛ Յիսուս Բրիստոս երկոքեան եւս կը մնան սոյն բազմութեան մէջ, նման այն մանուկներուն, որք հրապարակի մէջ նստած կը կոչեն իրենց ընկերներն և կ'ասեն. «Փողս հարաք ձեզ՝ և ո՛չ կաքաւեցիք. ողբացաք ձեզ՝ և ո՛չ կոծեցարուք»:

Ժողովրդեան համար անհնարին էր, որ կարենար ընտրութիւն առնել եւ սոյն երկու մարգարէներէն մին ըն-

դուներ. հետեւապէս, կամ երկուսն
 եւս պիտի ընդունէր և կամ երկուսն
 եւս պիտի մերժէր: Վասն զի Յիսուս
 Քրիստոս կը ճանաչէր եւ կը հո չակէր
 Յովհաննէս Մկրտչի պաշտօնն և յայտ-
 նապէս մկրտեցաւ նորա ձեռք: Յով-
 հաննէս Մկրտչն եւս, իւր կողմէն,
 մեծ յարգանք, մեծ ակնածութեամբ
 կը խօսէր Յիսուսի Քրիստոսի վերայ:
 Եթէ Յովհաննէս Մկրտչն մարգարէ է,
 Ուրեմն Յիսուս ևս մարգարէ է. քանզի
 Յովհաննէս ինքն կը քարոզէ: Եթէ Յի-
 սուս մարգարէ է, ուրեմն Յովհաննէս
 եւս մարգարէ է. վասն զի Յիսուս ոչ
 միայն մարգարէ, այլ և մեծ մարգարէ
 կ'անուանէ զՅովհաննէս: Թէ՛ մին եւ
 թէ՛ միւսն չեն կամիր ընդունուիլ միայ-
 նակ: Երկրբեան եւս կը քարոզեն, որ
 անհնար է միոյն պաշտօնին հաւատալ
 առանց միւսոյն պաշտօնին հաւատա-
 լու: Երկրբեան և ս զիրար կ'երաշխա-
 ւորեն: Երկրբեան միասին պիտի մտա-
 նեն և միասին պիտի ելնեն: Եւ հետե-
 ւապէս ժողովուրդն եւս պարտաւոր

ուած է կամ երկուսն ևս ընդունիլ և
 կամ երկուսն եւս մերժել:
 Կը տեսնենք ահա, եղբարք, որ Յի-
 սուս Քրիստոս և Յովհաննէս Մկրտչ
 հաստատապէս կը վկայեն իրարու հա-
 մար. բայց մի թէ սոյն փոփոխակի վե-
 կայութենէն ժողովուրդն չ'պիտի ըս-
 տիպուի խորհիլ և կասկածիլ նոցա վկա-
 յութեան վերայ: Երբ երկու քարոզաց
 վարդապետութիւնն իրարու հակա-
 դակ կ'երեւի, իսկ ընդհակառակն՝ քա-
 ռոզիչներն միմեանց համար վկայութիւն
 կը տան, միմեանց ջատագով կը հան-
 գիտանան, իրարմէ ապացոյց կ'առնուն.
 երբ սոյն երեւոյթն կը տեսնուի, քնա-
 կանաքար կը հետեւի, որ կասկածներն
 իրական և հիմնաւոր չեն, և ոչ թէ հա-
 կասութիւն, այլ անշուշտ համաձայնու-
 թիւն կայ երկու քարոզաց վարդապե-
 տութեան մէջ, և եթէ որոնուի, իս-
 կոյն կը տեսնուի սոյն համաձայնութիւ-
 նրն: Վասն զի եթէ իրական լինէր նոցա
 վարդապետութեան մէջ երեւցած հա-
 կասութիւնն, ոչ ապաքէն քարոզիչքն

աւելի շուտով կարող էին նշմարել մի
մեանց հակասութիւնն քան թէ այլք։
Ո՞չ ապաքէն հակասութեան վնասն քաւ
բողիչներուն աւելի կը վերաբերէր և
ամենէն առաջ նորա պիտի աճապարէին
միմեանց հակասութիւնն հերքել, որ
պէս զի իւրաքանչիւրն իւր կողմէն կաւ
բող լինի կուսակցութիւն շահիլ և իւր
վարդապետութիւնն յառաջ տանել։
Ո՞չ ապաքէն, եթէ բացարձակ իսկ չք
նշաւակէին միմեանց հակասութիւնն,
անշուշտ ուրիշ եղանակաւ կը զգաւ
ցնէին ժողովրդեան, որ միմեանց հաւ
կառակ կը վարդապետեն և միայն վար
դապետութիւնն՝ հերքումն է միւսոյն։
Սակայն կը տեսնենք ահա, որ սչ մի
այն չեն մերժեր իրարու վարդապետու
թիւն, այլ կը վկայեն իրարու համար,
թէ և իրենց վարդապետութիւնն, իւ
րենց վարմունքն, ըստ երեւութիւն, մին
դատապարտութիւն կ'երեւի միւսոյն։
Բայց ինչու զանազան են թաղբութեանց
կը զիմէ ժողովուրդն, ինչու կը շփոթի
ինչու կը տագնապի, քանի որ կը տես

նէ թէ երկու քարոզիչներն իրարու հաւ
մար կը վկայեն, պէտք է որ ինքն եւս
այսպէս քննութեան առնու գործն, այն
է՛ սոյն երկու քարոզիչքն, որք իրաւ
րու հակառակ կ'երեւին, իսկապէս իւ
րարու հակառակ չեն և անպատճառ
մի հիմնական համաձայնութիւն կայ
սոցա մէջ։

Եթէ ժողովուրդն այս կիտէն նա
յէր, և այս եղանակաւ քննէր, շուտով
կը պարզուէր խնդիրն։ Ժողովուրդն
պիտի քննէր հիմնապէս՝ թէ կայ ար
դեօք իրական հակասութիւն երկու
մարդարէից վարդապետութեան մէջ։
Ի՞նչ բանի մէջ է արդեօք հակասու
թիւնն։ Տարբեր պարտաւորութիւն
ներ կը քարոզեն արդեօք։ Տարբեր իւ
մասաներ և զգացումներ կը յայտնեն
արդեօք։ Տարբեր Աստուած կը քարո
զեն արդեօք։ — Ո՞չ երբէք։ Տարբեր
կերպիւ կը նային արդեօք ժողովրդեան
վերայ, մին կը նախապատուէ՝ արդեօք
հասարակութեան մի դասն և միւսն նո
րա ներհակն կը գործէ։ — Ո՞չ երբէք։

Այլ որ կը դիմէ երկու մարդարէններուն, սիրով եւ բարով կ'ընդունին : Երկուքեան եւս նոյն սէրն կը տածեն առ ժողովուրդն . երկոքեան եւս կը սիրեն բեկեալ սրտերն : Երկոքեան եւս ժողովուրդի բարութեան կը փափաքին : Ի՞նչ է ուրեմն որ կը բաժնէ երկուսն իրարմէ . ի՞նչ է որ անհամաձայն եւ անմիաբան կ'երեւցնէ : - Մին եկած է , ո՛չ կ'ուտէ , ո՛չ կը խմէ , այսինքն օսատիկ խտասկեցութեամբ կ'ապրի . իսկ միւսն եկած է , կ'ուտէ եւ կը խմէ , այսինքն միւս մարդկանց պէս կ'ապրի : Բայց ուրովհետեւ ո՛չ մին եւ ո՛չ միւսն իրենց կեցութեան եղանակն իբրեւ օրինակ եւ օրէնք չեն աւանդեր այլոց . սրովհետեւ կեցութեան երկու եղանակներն եւս , բոտ տեղւոյն եւ բոտ ժամանակին , կարող են գործ դրուիլ , եւ մին բնաւ դատապարտութիւն չէ միւսոյն . ուստի մարդ կարող չէ բնաւ այս պարագայէն օգուտ քաղել եւ յայտարարել , որ այն երկու մարդարէքն իրարու հաւառակ կը խօսին :

Բայց անշուշտ գիտողութիւն պիտի անէք , եղբարք , որ ես ամեն բան չասայի . եւ արդարեւ՝ չասայի : Մարդոց Արդին գալով՝ ո՛չ միայն կ'ուտէր եւ կը խմէր , այլ կ'ուտէր եւ կը խմէր մաքսաւորաց եւ մեղաւորաց հետ , եւ աստի կը հետեւցնեն չըբայք , որ Արդին մարդոց բարեկամ է մաքսաւորաց եւ մեղաւորաց : Եւ ո՛չ միայն այսչափ , այլ թերեւս կ'ուզէին ասել , որ Արդին մարդոց ո՛չ միայն բարեկամ է մաքսաւորաց եւ մեղաւորաց , այլ հետեւող է նոցա օրինակին , մասնակից նոցակեանքին եւ ընթացքին : Լաւ նկատեցէք , եղբարք , միթէ զարմանալու է , որ մարդոց Արդին Բարեկամ է մեղաւորաց . միթէ աւելի ուրախանալու չէ այս մասին : Ա՞յս ազգայէն Յովհաննէս Մկրտիչն եւս կ'ընդունէր մեղաւորներն , միայն այսու տարբերութեամբ , որ նա անապատին մէջ կը սպասէր մեղաւորաց . իսկ Յիսուս Քրիստոս կը շքէր , կ'որոնէր , կը խնդրէր մեղաւորներն : Բարեկամ՝ մեղաւորաց . եւ այս

բարեկամութիւնն յանցանք կը համարէք Յիսուսին : Լաւ կը մտածէք արդեօք այս բանիս վերայ : Գուք յանցանք կը համարէք Յիսուսին, որ ուրիշներէն, նաեւ նոյն իսկ Յովհաննէս Մկրտչէն, աւելի լաւ կը յաղթէ այն զղուանքին, զոր բնականաբար կըզգայ սուրբն և արդարն, երբ կը հանդիպի մեղաւոր հասարակութեան, երբ կը պատահի յանցաւոր մարդոյ, երբ կը տեսնէ մըն մարդ : Յանցանք կը համարէք, որ Յիսուս Քրիստոս կը գլխայ այնպիսի անձանց վերայ, որոց վերայ բացի իրմէն ոչ ոք պիտի չը գլխար երբէք : Յանցանք կը համարէք, որ այս մեղաւոր մարդիկն համարուածիւն կըզգան առ աստուածային քարոզիչն արդարութեան, և երկար ժամանակ ուրոնելէն զինի՛ այժմ կը տեսնեն իրենց մէջ, կը ճանաչեն, կը սիրեն և կը փափաքին նորա խօսքերն լսել, որք լի են շնորհօք եւ ճշմարտութեամբ : Յանցանք կը համարէք, աւանդ, որ թագաւորն սրբութեան, թագաւորն սըլ-

բոց, անհուն խոնարհութեամբ, սեղան նստած է մեղաւորաց հետ, որպէս զի այս պատեհ առթիւ դրաւէ նոցա սիրան ու հոգին : Ինչու արդեօք դուք եւս ձեր սեղանն չէք հրաւիրեր զՅիսուս : Նա ձեր սեղանն եւս կը գայ : Նա կ'երթայ, ուր որ զինքն կոչեն, և եթէ մի օր Փարիսեցիին եւս հրաւիրելըր մօտ ճաշելու, պիտի սիրով երթայ այս ամենաբարի Փրկիչն և թերեւս այս սեղանին վերայ եւս պիտի հնչեցնել իւր ամենէն սրտաշարժ և ամենէն վըսեմագոյն քարոզն : Բայց դուք կ'ասէք. միթէ հացկերոյթն քարոզութեան տեղ է. միթէ ուտելով և խմելով վարդապետութիւն կը լինի : Ի՞նչ պատրաստութիւն, ի՞նչ տեղ, ի՞նչ լսարան է այս, ուր բարեպաշտութիւն կը քարոզուի : Միթէ այն է տեղին և եղանակն քարոզից և վարդապետութեան : Գիտեմ, գիտեմ, որ ըստ ձեզ, պէտք է հեռացնել այս սեղանն, պէտք է վերջընել այս կերակուրներն, գինիներն, ծաղիկներն եւ թերեւս այս կանաչե-

ղէններն իսկ, և շուտով պատրաստել
 քարոզութեան ամբիոն մարգարէին
 համար: Միթէ Յիսուս շատ անգամ,
 առանց յառաջաբանի և առանց հան-
 դիսի, խօսեցած չէ երկնային բաներու
 վերայ, կամ մի ձիթենւոյ հովանւոյն
 առիկ, կամ մի ձորակի ափանց վերայ,
 կամ մի մեծ ճանապարհի փուռոյ մէջ:
 Ի՞նչ է ուրեմն ձեր ինդրածն, ո՞վ դուք
 մարմնաւոր և կեղծ հոգեւոր մարդիկ:
 Ի՞նչ է այս ժողովն և հացկերոյթն, Յի-
 սուսի Քրիստոսի համար, եթէ ո՛չ պա-
 տեհ առիթ, որով կարող է խօսքեր խօ-
 սիլ հոգւոց խաղաղութեան համար:
 Միթէ յանցաւոր են այն ինձոյքներն
 ու հացկերոյթներն: — Քայց դուք մին-
 չեւ ցայսօր այնպէս կարծած չէք և եր-
 բէք ինձոյքներն դատապարտած չէք:
 Ի՞նչ կարող է արգիլուլ ուրեմն, որ Յի-
 սուս Քրիստոս եւս բազմի ՚ի սեղան
 ինձոյից:

Եթէ հացկերոյթներն յանցաւոր
 են, դուք ինչո՞ւ յաճախ հացկերոյթ-
 ներ կը կազմէք: Որո՞նք են ուրեմն այն

սեղաններն, այն կոչուէքներն, ուր կա-
 բելի չէ շահաւէտ խօսք խօսիլ և, ուր
 ըստ ձեր կարծեաց, մի բարեպաշտ մարդ
 կարող չէ նստիլ: Քայց թողունք այն
 հարցմունքներն և նայինք, այս բարե-
 շուք կոչնականի դորձքերուն և խօսքե-
 բուն: Յովհաննէս Մկրտիչն, զոր դուք
 ընդդիմակաց կը համարէք Յիսուսին,
 Յովհաննէս Մկրտիչն իւր անապատին
 մէջ միթէ պիտի աւելի շատ խօսէր,
 աւելի օգտաւէտ խօսէր: Լաւ նայե-
 ցէք, լաւ ՚ի միտ առէք, նա որ այժմ՝
 սեղան կը նստի մեղաւորաց հետ, մի
 թէ բնաւ նորան պիտի չը նմանի՞, որ
 անապատին մէջ ուրիշ կերակուր չու-
 նէր, բայց միայն մարախ և մեղր վա-
 բնի: Վասն զի ո՛չ ասպարէն մի և նոյն
 վարդապետութիւնն, մի և նոյն խօսքն
 է ՚ի բերանս երկոցունց: Քան մի կայ
 միայն, որ դիտողութեան արժանի է.
 տեղի տուած է Նախընթացի ճակա-
 տէն այն տխուր խտտակեցութիւնն,
 որով երբեմն մթազնած էր, և թագա-
 ւորած է նորա տեղ երկնային իմն խա-

զաղուծիւն և ուրախուծիւն : Բայց
ասացէք համարձակ, ի՞նչ կը խօսինա,
որ արժանի չէ այն երկինքին, զոր կը
բանայ ձեզ, և այն Աստուծոյն, զոր կը
քարոզէ ձեզ :

Ա՛խ, թողէք ինձ, որ ես ասեմ
ձեզ : Երբ կը համարձակիք դուք յան-
դիմանել եւ կշամբել այս կամաւոր
ազքատն, որ գլուխ գնելու տեղ չու-
նի և իւր օրերն արեգակի շերմուծեան
տակ կ'անցնէ և իւր գիշերներն առանց
ծածկուծի և ապաստանի. երբ կը կըշ-
տամբէք զնա, որ միանգամ մեծատան
հայկերոյթն ընդունեց, ինչպէս որ ըն-
դունեց անապատի մէջ աղքատի հայրի
կտորն, այս կշտամբուծեամբ դուք ձեր
միտքն չէք յայտներ եւ գայթակղու-
ծեան ինդիր մի կը յուզէք, որ բոլը-
րովին անտեղի է : Ձեր ցաւն ո՛չ այս է և
ո՛չ այն, այլ թէ ինչո՞ւ Յիսուս մեծա-
տան հրաւերն ընդունած և նորա հետ
սեղան նստած է : Բայց ո՛չ ապաքէն այս
կոչունքին մէջ եւս կը խօսի չափաւո-
րուծեան, ժուժկալուծեան, արդա-

բուծեան և վերջին դատաստանի վե-
րայ, ինչպէս որ կը խօսէր ծովակներու
ախանց վերայ և լեբանց գագաթանց
վերայ : Կա կը հրաւիրէ զձեզ ՚ի սրբ-
բուծիւն, նա կը զարթուցանէ ձեր
յիշողութեան յաւիտենական օրէնք-
ներն, զոր առ ոսն կոխեցիք. նա կը
նկարագրէ ձեր վիճակն և ահա՛ այս է,
զոր կարող չէք տանիլ և կեղծաւորա-
բար գայթակղեալ կը ձեւանաք և իբր
թէ չէք ուզեր ամենեւին անսուրբ տե-
ղոց մէջ (կոչունքի մէջ) սրբուծեան
դասեր և իրասներ լսել : Ա՛հ, աւելի
լա՞ւ պիտի լինի արդեօք շտել գաւթի
մէջ, տաճարի մէջ, այն արիւնտտ բեմի
բարձրութենէն, այն խաչի արիւնա-
զանգ բազմոցէն, ուստի մի վերջին ան-
գամ եւս պէտք է ուսուցանէ և օրհ-
նէ զմարդիկ :

Կը տեսնենք ահա՛, որ եթէ սոյն
պիտի մի գիւրին բնուծեամբ համո-
զուած լինէին, թէ մի և նոյն հոգին է
՚ի Յովհաննէս Մկրտիչ և ՚ի Յիսուս
Քրիստոս, մի և նոյն վարդապետու-

Թիւնն է և բարոյականն . եթէ քննած
 և համոզուած լինէին , որ ոչ Յովհանն
 նու սրբութիւնն առանց կարեկցու-
 թեան և գթութեան է և ոչ Յիսուսի
 Քրիստոսի կարեկցութիւնն՝ առանց սրբ-
 բութեան , այնուհետեւ հարկ չ'էր վե-
 նիր ամենեւին երկրորդ քննութեան զի-
 մել համոզուելու համար , որ մի միայն
 Սեսիայի և իւր նախընթաց Կարապե-
 տի վարդապետութիւնն է արժանի ըն-
 դունելութեան : Երբ վարդապետու-
 թեան միութիւնն հաստատուէր , ան-
 հնարին էր որ պարզութիւնն , սրբու-
 թիւնն և գեղեցկութիւնն եւս ընդ նը-
 մին չը հաստատուէին : Այնեքեւ պիտի
 տեսնուէր այնուհետեւ , որ երկու մար-
 գարէքն եւս կը հրաւիրեն զմարդ ճա-
 նաչել զինքն և ՚ի միտ առնուլ իւր վախ-
 ճանն ու կատարածն : Երկոքեան ևս
 կը ջանան զարթուցանել մարդոյ խղճին
 մէջ զղջում և ստրջանք : Երկոքեան ևս
 մարդն Աստուծոյ ներկայութեան բե-
 րելով՝ կը պարտաւորեն ծունդ չըբել
 այս թշնամանեալ Աստուածութեան

առջեւ : Երկոքեան եւս կը քարոզեն
 ամենամարուր առաքինութիւն և կը
 խնդրեն տալաւորել մարդոյ հոգւոյ մէջ
 արժանաւոր իղձեր և միտուամենք : Երբ
 այս ամենն տեսնուէր , ճանաչուէր և
 խոստովանուէր , գայթակղութիւնն իս-
 կոյն կը դադրէր : Բայց կարծեմ թէ այ-
 սու եւս գոհ պիտի չը լինէին , այլ պի-
 տի ցանկային իմանալ թէ քանի որ
 Յովհաննէս և Քրիստոս հոգւով և վաղ-
 դապետութեամբ համաձայն են իրա-
 բու հետ , ինչո՞ւ համար կենցաղապա-
 բութեան մէջ իրարմէ կը տարբերին :
 Ինչո՞ւ համար առաջնոյն իմաստութիւ-
 նըն տեսակ մի տխրութիւն և վայրա-
 գութիւն ունի : Ինչո՞ւ համար երկրոր-
 դին իմաստութիւնն յայտնի կերպիւ-
 ընկերական է և համակրական : Թերեւս
 սոյն երկու մարգարէից սրբութիւնն և
 բարոյականի մաքրութիւնն ու վսեմու-
 թիւնն իմանալէն զկնի , սոյն կենցաղա-
 վարական տարբեր պարագաներն եւս
 կամին իմանալ : Ինչպէս որ շատ բա-
 նաւոր չ'էր սոյն տարբերութեանց առ-

Թիւ ուրանալ Յովհաննու և Յիսուսի մէջ եղած հական նմանութիւնն, նոյն պէս բանաւոր է և բնական սոյն նմանութիւնն ճանաչելէն և հաստատելէն զկնի՝ խոյղ և խնդիր լինիլ տարբերութիւնն իմանալու: Ինչո՞ւ վարդապետութեամբ, սրբութեամբ և բարոյականաւ մի են Յովհաննէս և Յիսուս Քրիստոս, իսկ կեցութեամբ տարբեր: Ահա՛ երկրորդ առիթ մտատանջութեան Հրէից և իրենց նմանեաց:

Հրէից մէջէն նոքա, որոնք առաջին քայլն արած էին, այսինքն երկու մարդարէից վարդապետութեան միութիւնըն ու բարոյականի սրբութիւնն ճանաչած էին, իսկոյն երկրորդ քայլն եւս արին, այսինքն թէ ինչո՞ւ համար կեցութեամբ կը տարբերին Յովհաննէս և Յիսուս: Նոքա ասացին ինքնին, որ հոգւով միացած սոյն երկու սուրբ անձանց մէջ տեսնուած տարբերութիւնըն պատահական չէ, այլ բանաւոր և նաև նախատեսուած: Նոքա ասացին, որ անշուշտ սոյն տարբերութիւնն նը

չանակութիւն ունի և է անտարակոյս ՚ի շինութիւն և ՚ի կրթութիւն մարդկութեան: Մեր Փրկիչն ո՛չ թէ վատ նշան կը համարէր, այլ ընդհակառակն կամէր, որ սոյն տարբերութիւնն նկատուի և տեսնուի: Եւ երբ սոյն տարբերութեան համար խնդիր կը յուզուէր, մեր Տէրն շարհամարհեց պատասխանել: Յովհաննիսի աշակերտքն եկին և ասացին Յիսուսին. « Ընդէր մեր և Փարիսեցիքն պահէմք յաճախ և քո աշակերտքն ո՛չ պահեն »: Յիսուս պատասխանեց. « Միթէ մարթ ինչ իցէ մանկանց առագաստի սուգ առնուլ՝ մինչ փեսայն ընդ նոսա իցէ »: Մատ. Թ. 14-15:

Երկու բան կը նշմարուի Յովհաննու աշակերտաց հարցման մէջ. առաջինն է զարմացումն Յիսուսի աշակերտաց վերայ, որ բնաւ չեն պահեր. վասն զի պահեցողութիւնն էր, որ իրենց աւելի բնական և օրինաւոր կերեւէր, և ընդհակառակն ոչ պահեցողութիւնն իրենց զարմանքն կը շարժէր:

Իսկ երկրորդն է այն , որ միայն իրենք չեն պահողն , այլ Փարիսեցիք եւս կը պահեն ՚ի հնուց անտի : Եւ այս պատճառաւ Փարիսեցւոց օրինակն յառաջ կը բերեն , որովհետեւ նոցա պահեցողութիւնն եւս բնական կ'երեւի ինչ պէս իրենցն : Ուրեմն պահքն է այս տեղ կանոնաւորն և սովորականն . իսկ ընդհակառակն՝ ոչ պահեցողութիւնն է բացառութիւն և նորութիւն : Երբ Տիրոջ պատասխանն գրեթէ մի բառի մէջ է , բայց այս բառն է մի ճառագայթ լուսոյ . « Փեսայի բարեկամներն կարող չեն պահել քանի որ Փեսայն իւրենց հետ է » . և սիլ է այս Փեսայն .
— Ինքն Յիսուս Քրիստոս :

Այսպէս ուրեմն , ամենքն , որոնք Յիսուսէն առաջ էին և նորա հաղորդակցութենէն հետի , կը պահէին . Յիսուս Քրիստոս պարզապէս չը յայտնէր այս կէտն , բայց նորա տուած պատասխանէն լիովին կը հասկացուի : Վասն զի ոչ — պահեցողութիւնն իւր հետ եղածներուն համար արտօնու-

թիւն կը համարի : Սակայն զանազանելուէ Փարիսեցւոց և Յովհաննու աշակերտաց մէջ եղած տարբերութիւնն , զոր իրենք չեն ուզեր զանազանել : Փարիսեցւոց պահքն ձեւ մի էր , յորմէ գաղափարն հեռացած էր , կամ աւելի լու է ասել , մինչդեռ ՚ի սկզբան պահոց գաղափարն էր՝ գաղափարաբարձ մութեան ապաշխարող սրտի , այժմ փոխած էին Փարիսեցիք ուրիշ գաղափարի , այն է կամաւոր զիտղութեան և ձեռք բերած արժանաւորութեան : Միտլ բանիւ , ՚ի սկզբան պահքն ապաշխարութեան նշան էր , այժմ Փարիսեցիք դարձուցած էին իբրեւ պարձանաց նշան : Իսկ ընդհակառակի Յովհաննէս Մկրտչի պահքն հիմնուած էր նախկին ճշմարիտ գաղափարի վերայ : Թէ՛ նորա պահքն և թէ՛ մկրտութիւնն պատկեր էին ապաշխարութեան : Յովհաննէս այն պատճառաւ կը պահէր և պահք կը քարոզէր , որպէս զի կարողանար զգալի կերպիւ մարմնացնել և պատկերացնել այն մեծ և անփոփոխ

սկզբունքն՝ թէ զղուամն, այն է լալն և ստրջանալն վասն մեղայ՝ է առաջին պայման փրկութեան և միակ ճանապարհ կենաց:

Բայց անշուշտ պիտի ասէք դուք ինձ, եղբարք. ո՞չ ապարէն Յովհաննէս Մկրտիչ՝ Փետայի, այսինքն Յիսուսի Քրիստոսի, բարեկամներէն մին էր: Ո՞չ ապարէն սրտով Փետայի ընտանութեան մէջ կը բնակէր: Ի՞նչպէս կարող էր նա տրամիլ, և սգոյ ու արտասուաց առաջնորդ լինիլ արտամեալ հոգիներուն: Ո՞չ ապարէն զՅիսուս Քրիստոս տեսած ժամանակ յայտարարեց նա, որ իւր ուրախութիւնն լլեալ է:

Տարակոյս չը կայ, եղբարք, որ Յովհաննէս Մկրտիչ Փետայի բարեկամներէն և փեսաւէրներէն մին էր և հետեւապէս իւր ուրախութիւնն կատարեալ էր: Բայց սոյն Յովհաննէս Մկրտիչն, որ յինքն կ'ամբողջէր բովանդակ Հին Ատակարանն, բոլոր հին մարգարէքն, որոյ շղթայն իւր մէջ կ'եղէրէր, պաշտօն ստացած էր ա-

պաշխարութիւն քարոզելու: Նա իւր քարոզութեան սուր եւ պատառոզ խոխոջն կը բանար այն ախօսներն, զորս յետ սակաւ ժամանակի պիտի մըշակէին, պիտի պտղաբերէին երկնային արեգական կենդանարար ճառագայթներն: Նա սրտերն կը պատրաստէր զՅիսուս Քրիստոս ընդունելու համար. և ինչով կ'ամ ի՛նչպէս կը պատրաստէր. — ապաշխարութեամբ: Տխուր էր նորա պաշտօնն և ատուր այն արտմութեամբ, «Որով սիրտն յուրախութիւն կը փոխի»: Էլէ՛ւ. է: Տխուր էր իրապէս և պարզապէս: Թէեւ մարգարէ, բայց իբրեւ մարդ և մեղաւոր՝ կը կրէր իւր սրտին մէջ այն ներքին արտմութիւնն, զոր կը կրէ մեղաւորն, երբ կամաց կամաց կըզգայ իւր իսկական վիճակն, կը ճանաչէ իւր մեղաւորութիւնն, կը ճանաչէ իւր ներողութեան կարօտ դրութիւնն, կը ճանաչէ, որ զրկուած է Աստուծոյ առջեւ յամենայն փառաց և ՚ի պատուոյ: Յովհաննէս Մկրտիչ, առանց ինքնին ապաշխարե-

լու՝ ապաշխարու թիւն չէր քարոզէր :
 Նա ներխայտացուցիչ էր մարգկային խղճի,
 ինչպէս Յիսուս Քրիստոս ներկա
 յայցուցիչ պիտի լինէր աստուածային
 արդարութեան : Յովհաննէս կը տես-
 նէր ամենամեծ և խորհրդաւոր ժամա-
 նակալեան հասած . կը տեսնէր իւր
 թշուառ ազգի վիճակն , զոր իւր մէջ
 կը կրէր բովանդակ . կը տեսնէր տա-
 պարն առ արմին ծառայ . կը տեսնէր
 աստուածային ցասումն , որ պիտի զե-
 ղանէր ողորմութեամբ և գթութեամբ
 հանդերձ , կը տեսնէր այս ամենն եւ
 կ'աճապարէր ամեն եղանակ գործ դը-
 նել , և թէ՛ բանիւ և թէ՛ գործով զե-
 կուցանել իւր ազգին :

Յովհաննէս էր կենդանի ուռն , կեն-
 դանի մուրճ , զրկուած՝ սրտերն բեկա-
 նելու համար՝ ուստի և իւր կեանքն
 իւր պաշտօնի խտուութեանն կը համա-
 կերպէր : Հաղարաւոր խտուութիւններ
 գործ կը դնէր իւր անձին դէմ , առ-
 ժանեղի խտտակեցութեան մէջ զինքն
 կը կրթէր . բայց այս ամենն տակաւին

անկատար նշան էին այն խտուութեան,
 որով կը սրտմի ճշմարտապէս ապաշ-
 խարող սիրան : Յովհաննէս Մկրտչի
 բնական անապատն մի դաս է և միան-
 դամայն մի պատկեր :— Գաս է նոցա հա-
 մար , որոնք տակաւին չը գիտեն թէ
 ի՞նչպէս աշխարհիս գղրգոցներն , աշ-
 խարհիս յուզումներն դիւրութեամբ
 կը ծածկեն կը լռեցնեն խղճի և Աս-
 տուծոյ ձայնն : Պատկեր է այն անա-
 պատն այն մեղքէ յաղթահարեալ հո-
 գւոյն , որոյ մխիթարութիւններն յան-
 կարճ կ'ըստպասին , և իւր շուրջն ուրիշ
 բան չը տեսնէր , բայց միայն իւր մեղ-
 քն — տխուր անապատ : Յովհաննէս
 օգոյ խտուութեան կը մատնէ իւր անձն ,
 խտրը ուտելիքներով կը սնանի , իբրև
 պատկեր այն ապաշխարող մեղաւորին ,
 որ զինքն խաղառ անարժան կը համա-
 րէ աստուածային շնորհաց և մինչեւ
 անգամ այն բարիքներուն , զոր հաւա-
 պորապէս կը բաշխէ ամեն արարածոց :
 Յովհաննէս Կարապետի ընթացքն թէ՛
 բանաւոր է և թէ՛ գերբնական : Նորա

վարքն , նորա ընթացքն յաւիտեան
 պիտի նշան և օրինակ լինէր ապաշխա-
 ղութեան : Արդ՝ ամեն ապաշխարող
 հոգի բնակած է այն անապատին մէջ ,
 կերակրուած է սոյն վայրենի կերակ-
 րով , և այս նուաստ և ողբալի մերկու-
 թեամբ ներկայացած է աստուածային
 արդարութեան բարկացայտ նայուած-
 քին :

Բայց ահա՛ւասիկ Գառն Աստուծոյ,
 որ բառնայ զմեզս աշխարհի . ահա՛ւա-
 սիկ Փետայն մարդկութեան 'ի սուգ
 արտմութեան : Ահա՛ւասիկ Հրեշտակն
 Ուխտի . ահա՛ւասիկ Միջնորդն : Եթէ
 ամենայն ինչ 'ի Յովհաննէս Մկրտիչ
 պիտի համապատասխանէր իւր ներ-
 կայացուցած գաղտնիքին , ո՛չ ապա-
 քէն ամենայն ինչ 'ի Յիսուս Քրիստոս
 պիտի յայտնէ մեզ թէ ի՞նչ է Յիսուս
 Քրիստոս : Ա՛խ , եղբարք իմ , առանց
 Խաչին սպասելու եւս՝ ակներեւ կը
 յայտնէ մեզ Յիսուս՝ թէ ի՞նչ է ինքն :
 Վասն զի նորա բոլոր պաշտօնն արդէն
 մի երկար չարչարանք է , նորա բովան-

դակ կեանքն մի չարաչար մահ է : Ո՛չ
 թէ միայն մարդ պիտի լինի նա , որ նու-
 րա համար արդէն կը նշանակէ մեռնիլ-
 բայց որովհետեւ մեք մեղաւոր գոյով՝
 պիտի չը հասկնայինք՝ թէ՛ ոչ թագաւու-
 րական ծերանի , ո՛չ մեծութիւն , ո՛չ
 գանձ պիտի չը կարողանային յարգա-
 ընել սոյն հրաշալի իջումն , ուստի սոյն
 ունայնութեան մէջ նա պիտի որոնէ մի
 աւելի յայտնի ունայնութիւն , նա ,
 մարդկութեան համար իւր անձն ու-
 նայնացնելով՝ պիտի յառաջէ , պիտի ի-
 ջանէ 'ի մահ . նա պիտի լինի աղքատ .
 պիտի լինի անշուք և անարգ . նա տեղ
 պիտի չ'ունենայ իւր գլուխն հանգչե-
 ցընելու համար : Նա ամեն բանի պի-
 տի զեջանի . պիտի պահանջէն եւ նա
 բնաւ պիտի չընդդիմանայ : Աղքատ
 ներու , բորոտներու և անարգ մարդ-
 կանց ընկերութեան մէջ նա պիտի կրէ ,
 'ի պատահել հարկին , քաղց , ծարաւ ,
 ցուրտ , սոթ , զրկանք և նախատինք :
 Բայց մի պահանջէք Յիսուսէն , ինչ որ
 կարող չէ ներկայացնել . մի պահանջէք

ղըռմն և ասպաշխարութիւն, որ օտա-
 րօտի է նորա սուրբ սրտին, սուրբ ան-
 ձին համար: Յովհաննէս Մկրտչն ա-
 նապատն խնդրեց՝ անապատին համար,
 քաղցն՝ քաղցին համար, զըկումն՝ զըկ-
 ման համար, չքաւորութիւնն՝ չքա-
 ւորութեան համար: Բայց այսպէս չէ
 մեր Տիրոջ կրածն: Նա պիտի կրէ, պի-
 տի չարչարի աւաւել քան զՅովհան-
 նէս, բայց ոչ թէ իւր անձի օգնու-
 թեան համար, այլ այն բարեաց հա-
 մար, զոր կամի անել կամ արած է
 մարդկութեան համար: Սակայն, բա-
 բութիւնն, որ նորա միակ օրէնքն է,
 մարդասիրութիւնն, որ նորա սկզբունքն
 է, պէտք է զինքն վարեն ամեն տեղ:
 Նա պիտի լինի մերթ մեծամեծաց պա-
 լատներու մէջ, եթէ մեծամեծք զինքն
 կոչեն. մերթ և աւելի յաճախ պիտի
 լինի աղքատաց մօտ, եթէ աղքատ-
 ներն զինքն խնդրեն: Միով բանիւ, նա
 կը գթայ ինչպէս մեծամեծներուն, նոյն-
 պէս և աղքատներուն: Վասն զի կը
 տեսնէ նա, որ մեծատուններն իսկ,

որք երջանիկ կ'երեւին, իրենց մահէն
 զինի, իրենց ունեցածէն կոյուստուելէն
 զինի, դարձեալ իրենց բաժին թշուա-
 ուութիւնն պիտի ունենան: Ուրեմն մի
 պահանջէք, որ չը մտնէ մեծատանց
 ընկերութեան մէջ. թողէք որ նորա
 ներկայութիւնն սրբագործէ նոցա օտ-
 ներն ու հացկերոյթներն. նորա աստ-
 ուածային խօսքերն ուղղեն, սրբագը-
 րեն նոցա ուրախութեանց և զուար-
 ճութեանց յիմարութիւնն: Ինչպէս
 Աստուած, նոյնպէս և Մարդասիրու-
 թիւնն ամենուրեք է: Արեգակսն ճա-
 ուագայթն աղտեղութեան վերայ ընկ-
 նելով՝ չը պղծուիր. Յիսուս Քրիստոս
 մեղաւորաց ընկերութեան մէջ մտնե-
 լով՝ չը կորանցնէր իւր սրբութիւնն:
 Եթէ նորա պաշտելի սրբութիւնն ու
 անարատութիւնն արատաւորուելու
 լինէր, այն վայրկենէն պիտի արատա-
 ւորուէր, երբ մարդկանց մէջ բնակե-
 ցաւ, մարդկանց հետ խառնուեցաւ,
 Աստուածութենէն մարդկանց կարգն
 իջաւ:

Եղբայրք, այս երկու մարգարեից մէջ, յորոյ մին կը քարոզէ ապաշխարութիւն և միւսն փրկութիւն կը խոստանայ ապաշխարող սրտերուն, կայ սրբեօք ստուեր անգամ ընդդիմախօսութեան : — Ո՛չ բնաւ : Սակայն, ՚ի միոյն առ միւսն, առաջնոյն պաշտօնէն առ պաշտօն երկրորդին, կայ մի անջըպէս, կայ մի տարածութիւն, զոր Աստուծոյ աչքն միայն կարող է չափելը Խիստ լու նշմարած էր սոյն կէտն Յովհաննէս Մկրտիչ, երբ ասաց. « Որ ՚ի վերուստն գայ ՚ի վերոյ է քան զամենայն. որ յերկրէ աստի է, յերկրէ է՝ և յերկրէ խօսի » . Յով. Գ. 31 : Արդարև Յովհաննու ապաշխարութեան քարոզութիւնն, կերպիւ իւրիք, երկրի խօսք էր, մարդկային խօսք էր, գաղափար մի էր, որ կը ծնանի մարդոյ մէջ եւ զոր մարդ կ'ընդունի և կը հասկնայ : Բայց Ենորեք խօսքն Աստուածային խօսք է, և նա, որ Ենորեք բառն կ'արտասանէ, նա, որ ո՛չ միայն Ենորեք կը քարոզէ, այլ և խաղաղութիւն կը շնորհէ,

նա ՚ի վերոստ է և ՚ի վերոյ է քան զա. Ռեւոյն : Յովհաննէս Մկրտիչն մարդ է. իսկ Յիսուս Քրիստոս՝ Աստուած : Խիղճըն կը վկայէ առաջնոյն, բայց երկրորդին համար Հոգին Սուրբ պէտք է, որ վկայէ : Հոգին Սուրբ խղճի վկայութեան հակառակ բան մի պիտի չ'ատէ. բայց խիղճն պիտի չը կարողանայ յայտնել այն ամենն, ինչ որ Հոգին Սուրբ պիտի յայտնէ : Այս պատճառաւ ահա, ով որ զՅիսուս Քրիստոս ընդունի, անշուշտ պիտի ընդունի և զՅովհաննէս Մկրտիչ, կամ արդէն իսկ ընդունած է. վասն զի անհնար է փրկութեան հաւատալ, (որոյ պայմանն ապաշխարութիւնն է) առանց հաւատալու նոյն իսկ ապաշխարութեան : Բայց կարելի է ընդունիլ զՅովհաննէս, այսինքն հաւատալ ապաշխարութեան կարեւորութեանն, և առ ժամանակ ինչ, և թերեւս ընդերկար՝ մնալ առանց ընդունելու զՅիսուս Քրիստոս : Այս բանս շատերուն պատահեցաւ Յովհաննէս Մկրտիչի եւ Որդւոյ Մարդոյ օրերուն

մէջ . վասն զի Յովհաննու աշակերտ-
ներէն շատերն , թէ և զըրիւեցան առ
Յիսուս , բայց Յովհաննիսի մնացին յա-
մառութեամբ , և շատ ուշ Քրիստոս-
նեայ եղան կամ ամենեւին չ'եղան :
Այսպէս իսկ կը պատահի տակաւին
մեր օրերուն մէջ . ոմանք կ'ընդունին
դՅովհաննէս , այսինքն զմկրտութիւն
ապաշխարութեան եւ չեն ընդունիր
դՅիսուս Քրիստոս , այսինքն զմկրտու-
թիւն Հոգւոյն Սրբոյ : Սակայն այս
մասին բնաւ չեմք հոգար մենք . վասն
զի նոքա որ խկապէս առաջինն կ'ըն-
դունին , անհնարին է , որ մի օր երկ-
րորդն եւս չընդունին : Բայց ի՞նչ ա-
մենք նոցա համար , որք ոչ առաջինն
կ'ընդունին և ոչ երկրորդն : Ի՞նչ կը
մտածեն արդեօք նոքա ինքնին : Ի՞նչ
կը կարծեն . ուրիշ որո՞ւն կը յուսան
յերկրէ . ուրիշ որո՞ւն կ'ակնկալեն յեր-
կնից :

Այսպիսիներն են ահա , զորս կը
յանդիմանէ և կը դատապարտէ մեր
բնաբանն : Այսպիսիքն են ահա , որք

կը հայհոյեն երկու վարդապետու-
թիւնքն միանգամայն , հաւատարու
պայմաններէ զուրկ համարելով : Այս
ազգն , այս սերունդն է ահա , որոյ հա-
մար մարդ չը գիտէ թէ ի՞նչ երգելու
է : Վասն զի անդգայ է այս ազգն ինչ-
պէս տխուր ողբոց , նոյնպէս և ուրա-
խական երգոց համար . ոչ առաջիննե-
րէն կը զգածուի և կուլայ , և ոչ երկ-
րորդէն կը շարժուի և կ'ուրախանայ :
Ապաշխարութեան վերայ խօսիս , կը
յուզի և կը դարբանայ . շնորհաց վերայ
խօսիս , դարձեալ կը սքաւմտի եւ կը
զայրանայ :

Եղբարք , Յովհաննէս Մկրտչի եւ
Յիսուսի Քրիստոսի ժամանակն ըստ
երեւակայութեան միայն անցած է :
Յովհաննէս Մկրտչի և Յիսուսի Քրիս-
տոս տակաւին կան , տակաւին կը մնան :
Քրիստոնէութիւնն այն երկու մարդա-
րէններն եւս իւր մէջ կ'ամբողջէ : Քրիս-
տոնէութիւնն կազմուած է երկոցունց
քարոզութեանէն միանգամայն , յորոց
առաջինն կը պատարաստէ զերկրորդն ,

և երկրորդն կը լըացնէ զառաջինն : Եւ որովհետեւ իւրաքանչիւր ճշմարիտ Քրիստոնեայ կը ներկայացնէ և կ'անձնաւորէ յինքեան զքրիստոնէութիւնն և զոր ինչ էական է ՚ի քրիստոնէութեան , իւրաքանչիւր ճշմարիտ քրիստոնեայ նմանապէս կը գրգռէ այն գայթակղութիւնն , որոյ վերայ խօսուած է մեր բնաբանի մէջ , և կրկին հայհոյանաց տեղի կը տայ ընդդէմ Յովհաննու Մկրտչի և ընդդէմ Որդւոյ Մարդոյ : Ինչպէս Յովհաննէս Մկրտչէն և Քրիստոսէն կը գայթակղէին , նոյնպէս կը գայթակղին եւ ճշմարիտ քրիստոնէի կեանքէն ու վարքէն և կը սկսին հալածել :

Այսպէս են գրեթէ ամեն սերունդներ , որոնք իրարու կը յաջորդեն : Այսպէս է այն սերունդն իսկ , որ 18 դարերէն ՚ի վեր կը քնանայ Երուսաղէմի և Տաճարի բեկորներու հետ խառնուած : Աշխարհս տակաւին այն հրապարակն է , ուր մանուկներն կը կոչեն իրենց ընկերներն . « Փողս հարաք ձեզ՝ եւ ոչ

կաքաւիցիք , ողբայաք ձեզ՝ և ոչ կսճեցարուք » :

Թերեւս մեր Փրկիչն մի մանաւոր նպատակ ունէր , երբ այս սիրուն եւ սրտաշարժ տեսարանն պատկերացուց մեր առջև , երբ մանկանց և հրապարակի պատկերն ներկայացուց մեզ : Բայց ինչպէս կարող ենք չը զարմանալ , երբ նոյն իսկ մեր ըմբռնած իմաստով , կը տեսնենք , որ ճիշդ է այս ամենափոքր պարագայից նկատմամբ անգամ : Ինչքան գեղեցիկ է , որ քրիստոնեայք ներկայացած են ընդ կերպարանօք փոքրիկ մանկանց եւ իրենց հաւատոյ գաւանդութիւնն՝ երգոց օրինակաւ : Արգարեւ՝ հաւատացեալքն այն ժամանակ միայն իսկապէս հաւատացեալ են , երբ հաւատով եւ հնազանդութեամբ մանուկ եղած են : Նորա լիովին չնն ուսուցաներ , երբ չնն երգեր : Նոյս ամենէն բարձր և զգօն դասերն՝ երգեր են , զորս ոչ թէ հնարած են , այլ ուսած են հայրական տան մէջ , այնպիսի երգեր , զորս մարց փախուկ

և քաղցր ձայնն կը մրմնջէ նորածնե-
լոց օրօրոցին մօտ :

Այս բրիտանեայններն , այս հաւա-
տով մանուկներն , աշակերտներ չու-
նին , այլ ընկերներ : Նոքա իրենց ըն-
կերներն չեն որոներ իրենց տուներու
մէջ , այլ կ'որոնեն հրապարակի մէջ :
Նոքա միայն մի երգ չունին , նոքա կը
փորձեն թէ ո՞ր երգն աւելի հաճոյա-
կան է : Ուստի , նոքա երբեմն սրնգի
վերայ ուրախական եղանակներ կը հըն-
չեցնեն , երբեմն ողբաձայն նուագներ
կը նուագեն : Եթէ միայն ողբաձայն
նուագներ ստիպուէին երգել , չէին
վհատիր , այլ կը նուագէին , վասն զի
գիտեն նոքա , որ այնպիսի տրամու-
թիւն կայ , յորմէ ուրախութիւն կը
բղխի սրտի համար : Նոքա չեն ասեր
բնաւ , ինչպէս Եբրայեցիք կ'ասէին
Քաբիլոնի գետափանց վերայ . « Զիտ՞րդ
երգեսցուք մէք զօրհնութիւնս Տեառն
յերկիր օտար » : Փոխանակ լռելու՝
նոքա աւելի լաւ կը համարին իրենց
հոգւոյ սուգն ու ատրուութիւնն երգել :

Նոքա կը յայտնեն իրենց ներքին վիշտն
ու տառապանքն . նոքա կ'աղաղակեն
ինչպէս Ս . Պօղոս . « Այր մի տառա-
պեալ եմ ես , ո՞վ ապրեսցուցէ զիս՝ ՚ի
մարմնոյ աստի մահու » : Նոքա կը
պատմեն հոգւոյ և մարմնոյ ցաւալի
պատերազմն , բայց իրենց պանդխտու-
թեան աղէան ողբալով , ուրիշ պան-
դուխտներուն ցոյց կը տան ՚ի հե-
ռուստ , անդր քան զիոհական ալե-
ծուփ , անդր քան զգիշերն անփարատ ,
զափունս նորոգ հայրենեաց և զարշա-
լոյս անգիշեր և յաւիտենական աւուր :

Բայց աշխարհն միշտ նոյն է : Ող-
բաձայն եղանակներէն կը խորշի , ու-
րախաձայն նուագներէն կը գայթակղի :
Աւելի պարզ կերպիւ ասեմք , աշխարհս
փոփոխակի երկու կշտամբանք գործ կը
դնէ Քրիստոնէութեան դէմ , զորս իւ-
րաբանչիւրս հաղար անգամ լսած ենք :
Մի կողմէն կ'ասեն թէ՛ Քրիստոնէու-
թիւնն շատ խիստ է , շատ անողբ է .
շատ բան կը պահանջէ մարդկային բը-
նութենէն , ամենեւին չը ներէր , ամեն

փորժիկ բան մեծ յանցանք կը համարի :
 Նորա քարոզած բարոյականն արարա-
 ծոյ համար չէ : Ասան զի չափէն դուրս
 կը մեծցնէ թէ՛ Աստուծոյ պահանջում
 ներն և թէ՛ մարդոյ կարողութիւնն :
 Հետեւապէս Աւետարանի բարոյակա-
 նըն , իւր անչափաւոր պահանջումնե-
 րով , միայն յառաջ կը բերէ յափշտա-
 կուած մոլեռանդներ և կեղծաւորներ :
 Միւս կողմէն կ'ասեն թէ՛ Քրիստոսնե-
 ութիւնն շատ ներողամիտ է մարդկա-
 յին տկարութեան համար : Ի՞նչ է շե-
 նորհօք փրկութիւնն , եթէ մէջն ընթումն
 ամենայն բարոյական օրինաց և գործոց :
 Ի՞նչ չափազանց զիջողութիւն է այս ,
 որ կը քարոզուի թէ՛ մարդ կարող է
 երկինքն ստանալ իբրև վարձ միմիայն
 զայն ստանալու համար անեցած փա-
 վաքին համար : Ի՞նչքան օտարոտի է
 Աւետարանի այն վարդապետութիւ-
 նըն , որ առաջին ժամու և մետասան-
 երորդ ժամու մշակներն միակերպ կը
 վարձատրէ :

Այսպէս ահա՛ , կը տեսնեմք որ եր-

կու կողմէն եւս կը պահարակուի Քր-
 իստոսնեւթիւնն , մերթ իբրև շատ
 խիստ , մերթ իբրև ներողամիտ :

Եթէ այս կշտամբանքներն երկու
 դասակարգ մարդիկներէ լուսէին,սխտի
 չը զարմանայինք, որ լւրաքանչիւր դա-
 սակարգն միայն մի բան կարող կը լի-
 նի տեսնել Աւետարանի մէջ, հակառակ
 միւս դասակարգի տեսածին : Աստի
 և կարող էինք յուսալ, որ իւրաքանչիւր
 դասակարգն , իւր սրանածի միայն կէ-
 սըն գտնելով Աւետարանի մէջ, աւելի
 մօտէն նայելով և շատ գննելով՝ կարող
 է միւս կէսն եւս գտնել, այսինքն այն
 դասակարգն, որ Աւետարանի մէջ խըս-
 տութեան կարօտութիւն կը դգար՝ կը
 գտնէր խտութիւն . իսկ այն դասա-
 կարգն՝ որ գթութեան և ներողու-
 թեան կարօտութիւն կը դգար՝ կը գըա-
 նէր գթութիւն և ներողութիւն : Բայց
 զարմանալին այս է , որ կշտամբողներն
 երկու դասակարգ մարդիկ չ'են . այլ
 մի և նոյն անձինքն են , որք Աւետա-
 րանն կը կշտամբեն երկու հակառակ

կշտամբանքներով, մե՛րթ ներողամիտ
 և մե՛րթ խիստ և անողոր ճամբաւելով
 զայն, առանց նկատելու, որ այս երկու
 ներճակ կշտամբանքներն մին զմիւսն
 կ'ոչնչացնեն. իսկ երբ իրարու մօտ բե-
 բուին, իրարու հետ կցուին, փոխա-
 նակ դատապարտութիւն լինելու, ընդ-
 հակառակն՝ կը լինին կատարեալ գո-
 վեստ Քրիստոնէութեան :

Թէեւ սոյն երկու տեսակ ամբառ-
 տանութիւններն մի և նոյն անձինքնե-
 րէ կը լսուին, և հարկ է որ իրենց հա-
 կասութիւններն իրենց առջեւն բերե-
 լով՝ իրենց թերութիւնն ցոյց տանք,
 բայց մենք այնպէս պիտի ենթադրենք
 որ իբր թէ մի և նոյն անձինքն չ'են,
 այլ երկու առանձին դասակարգ, եր-
 կու առանձին կուսակցութիւն. եւ
 այս եղանակաւ պիտի պատասխանենք
 երկու կուսակցութեան եւս :

Սկսինք ուրեմն նախ այն դասակար-
 գի մարդիկներէն, որոնք կը գանգա-
 տին թէ՛ Քրիստոնէութիւնն խիստ է
 և աններողամիտ : Սոյն գանգատով

նորա սկզբունք մի կը մերժեն. բայց
 գիտնալու է, որ սկզբունք մի՛ ուրիշ
 սկզբան դորութեամբ միայն կը մեր-
 ժուի : Վասն զի, երբ մարդ մի բան
 կ'ուրանայ, պէտք է որ կարողանայ
 յայտնել թէ ի՞նչ է իւր կամեցածն,
 զոր կամի ուրացածին փոխարէն ընդու-
 նիլ : Գուք կը գանգատիք Աւետարա-
 նի խտուութենէն. այսինքն անորոշ
 կերպիւ կը սնդէք, որ չէք ընդու-
 նիր Աւետարանի խտուութիւնն : Բայց
 ասացէք, թէ ի՞նչ կ'ընդունելք, ի՞նչ
 կամիք : Կ'ուզէք արգելօք, որ Ա-
 ւետարանն, որ հեռի է ամեն խտու-
 թենէ, ո՛չ սանձ դնէ մեր կիրքերուն և
 ո՛չ սահման մեր կամաց : Գիտեմ որ
 չէք ընդունիր, այլ խիտն ազադակ կը
 բառնաք սոյնօրինակ ենթադրութեան
 դէմ : Ուրեմն կը ճանաչէք և կընդու-
 նիք որ և իցէ խտուութիւն Աւետարա-
 նի մէջ : Ի՞նչ չափով պիտի լինի այդ
 խտուութիւնն, կամ թէ ի՞նչ կամիք
 յապաւել Աւետարանի խտուութենէն,
 որ ձեր ուզած խտուութենէն աւելի չը

լինի : Աւետարանն կը պատուիրէ մեզ սիրել ընկերն իբրեւ մեր անձն . թերեւս այս պահանջն շատ է . ասացէք ուրեմն , ինչքան պահաս սիրելու է , որ ձեր ուզած չափովն լինի : Աւետարանն կամի , որ մենք սիրենք զԱստուած 'ի բոլոր սրտէ , 'ի բովանդակ մտայ և յամենայն անձնէ : Ի՞նչ կամիք , ասացէք , կ'ուզէք որ կէս սրտով , կէս անձնով և կէս մտքով սիրենք : Աւետարանն կը պատուիրէ մեզ , որ միշտ պարտինք դիմել 'ի կատարելութիւն : Յոյց տուէք մի կէտ կատարելութենէն ցած , որ դիմենք դէպ 'ի այն կէտն , առանց Աւետարանի քարոզած բարձր կատարելութեան ձգտելու : Քանի որ կը տեսնէք թէ կարող չէք սահման մի ցոյց տալ , ո՞չ ապաքէն այսու կը յայտնէք , որ սահման չը կայ ամենեւին : Միթէ ձեր խիղճն եւս չը վկայեր , որ սահման չը կայ :

Աւետարանն կը սրբագործածէ կատարելագործութեան օրէնքն , բայց երբէք հնարած չ'է զայն , վասն զի կա-

տարելագործութեան օրէնքն արդէն ձեր սրտին մէջն է , Աստուածութեան գաղափարի հետ միացած և զանգուած : Եթէ Աստուած է Աստուած , ուրեմն ամենայն ինչ է : Բայց ի՞նչ էք դուք : Ի՞նչով կարող էք ձեր գոյութիւնն ապահովել , եթէ ոչ առնելով զձեզ վրայ եւ գործի փառացն Աստուծոյ : Ասացէք ինձ , բայց յայտնանէ , կայ մի ուրիշ ճանապարհ . — ոչ բնաւ : Վասն զի ուրիշ ի՞նչ միջոց ունիք Աստուծոյ փառաց գիմելու , եթէ ոչ զձեզ Աստուծոյ ծառայութեանն նուիրելով , միայն զայն կամելով , զոր նա կամի , այն է միշտ բարին և յաւիտեան բարին . միով բանիւ , լինիլ սուրբ , որպէս սուրբ է Աստուած : Եւ եթէ այսպիսի մի ուղիղ զգացումն չը հպատակեցնեք ըզձեզ , ցոյց տուէք թէ կարելի է արդեօք Աստուծոյ օրէնքն բռնաբարել առանց պատժոյ , նորա արդարութիւնն 'ի դերեւ հանել և զինքն ծաղր առնել : Եթէ կարող չ'էք զայս առնել , ուրեմն հնազանդեցէք Աւետարանին , ընդու-

նեցէք նորա բարոյականն իւր բովանդակ կատարելութեամբ : Ընդունեցէք կրօնապէս , ընդունեցէք ջերմ զգացմամբ , որպէս զի դորձ դեկէք աւետարանական բարոյականի , աւետարանական օրինաց յետին նշանախիցն անգամ : Մեծ յանցանք համարեցէք ամենափոքր անհնազանդութիւնն անգամ , կամ թէ՛ ուրացէք իսպառ ամեն տեսակ բարոյականութիւն , երկիցս ՚ի նոյն չը վերագառնալու պայմանաւ : Ահա միակ ընտրութեան եղանակ , ընտրեցէք եւ լաւ ընտրեցէք . բայց՝ երբ օրինաց համայն բեռն ընդունելէն զին՝ զգաք , որ ձեր ծունկերն կը ծալին և ձեր սիրտըն կը նուազի , բարձրացուցէք ձեր աչքերն և տեսէք—ահա՛ Ծնորհքն ձեր առջեւն է կրկնակի անուամբ Միջնորդին Յիսուսի Քրիստոսի և մտիթարիչ Հոգւոյն Սրբոյ . Ծնորհքն ձեր առջեւն է բովանդակ զօրութեամբ և բովանդակ օրինօք . « Ողորմութիւնն և արգարութիւնն համբուրած են զիրեարդ , և այնուհետեւ ո՛չ թէ կը զարհուրիք

Աւետարանի սրբութենէն , ո՛չ թէ ծանր և խիստ կը համարիք , այլ կը զարմանաք նորա վերայ , կը սիրէք զայն և կ'օրհնէք : Այսքանս նոցա համար , որոնք Աւետարանի բարոյականն խիստ համարելով չեն ուզեր ընդունիլ :

Կան նաև այնպիսիք , որոնք կը գայթակղին Աւետարանի ներողամտութենէն : Այսպիսեաց եւս կ'ասենք , ինչ որ ասացինք օտաջիններուն : Սկզբ բունք մի գրէք այն սկզբան տեղ , զոր կը մերժէք , բացատրեցէք ձեր մտքն . ի՛նչ կ'ուզէք . չէք կամիր , որ Աւետարանն որ և իցէ ներողութիւն կամ գրթութիւն ունենայ : Այս կը նշանակէ , որ դուք ամենեւին չէք ուզեր , որ բարոյական օրէնքն ներողութիւն ունենայ : Ուրեմն , ձեր նայուածքով բարոյական օրէնքն անողորբելի է բնութեամբ , և ո՛չ մի գաշն , ո՛չ մի իրաւաստհոսութիւն , ո՛չ մի զիջողութիւն չընդունիր : Պատրաստուեցէք ուրեմն առաջին զոհն լինելու այս սքանչելի խրատութեան : Առաջին զոհն , կ'ասեմք ,

վանն զի դուք էք միայն , որ լաւ կը ճանաչէք թէ ինչ կը պահանջէ խրատութեան օրէնքն : Եթէ ձեր սիրան չը դատապարտէր զձեզ , ինչ գաղափար ունիք օրինաց և ձեր վերայ խի : “Եթէ ձեր սիրան զձեզ չը սողաններ , չը դատապարտէր , մտածեցէք , որ Աստուած մեծ է քան ձեր սիրան և գիտէ զամենայն ինչ ” : Երկիւզ ունիք դուք և կը սոսկաք ձեր համար և բոլոր աշխարհի համար . բայց ձեր երկիւզով որ եւ իցէ ներողութեան մի չափ պիտի գնէք Աւետարանին : Սակայն ձեր երկիւզն մի իրաւունք չէ և կարող չէ բնաւ իրաց միջանի մոխել : Ի՞նչ իրաւունքով կամիք դուք որ և իցէ բանի համար օրինաց խառութիւնըն նուազեցնել : Ի՞նչու պիտի ներուի որ և իցէ բան : Ի՞նչպէս կարող է ներուիլ այս ինչն : Միթէ ինչ որ եղած է , եղած չէ՞ արդէն : Միթէ մեզքն կարող է մեզքէն աւելի ուրիշ բան լինիլ երբէք : Ի՞նչպէս կարելի է ասել թէ այս ինչ մեզքն մեզք չէ և այն ինչ

մեզքն՝ մեզք է : Եթէ թոյլ տաք որ օրինաց մի նշանախէցն , մի սուրբ տառն անկանի , որ օրինաց մասն կը կազմէ , ինչպէս կարող էք պաշտպանել օրինաց ամբողջութիւնն : Ո՞չ ապաքէն այնուհետեւ օրէնքն խաղաղիկ կը դառնայ ձեր կիրքերուն : Իմացէք , եղբայրք , որ թիւր է այդ ճանապարհն , այլ պէտք է , որ կամ բովանդակ օրէնքն պաշտպանուի , կամ բովանդակն անկանի : Դուք կամեցաք խիստ լինիլ . եթէ կամիք անողորբ եղէք : Ենորհք , հեղանելով պիտի ասէք դուք վերջապէս . շնորհք խեղճ մարդկութեան համար : Այո՛ , Ենորհքն է ճմարիտ բառ . Ենորհքն է աստուածային բառ : Բայց ի՞նչու արդեօք շնորհքն ազատ պիտի չը լինի : Ի՞նչ հիման վերայ կարող էք պնդել թէ ձեզ կը պատկանի շնորհքն նուազեցնել , սահմանափակել . և մեզ չը պատկանիր օրէնքն սահմանափակել : Ենորհքն դրութիւն չէ . շնորհքն գիւտ կամ հնարք չէ . շնորհքն գործ է Աստուծոյ : Երբ միանգամ ընդունիք թէ

Աստուած կը շնորհէ . միթէ անմտու
 թիւն չէ՞ այնուհետեւ շատ կամ սա
 կաւ շնորհելու խնդիրներ յարուցանել,
 ինչպէս կը յարուցանէք դուք : Միթէ
 անտեղի չէ՞ խնդիր յուզել թէ սոցա շք
 նորհելու է և նոցա ոչ : Ա՛խ , եղբա՛րք ,
 ձեր այս խտրութիւններն , ձեր այս բա
 ժանութիւններն զձեզ կը մոլորեցնեն և կը
 խաբեն : Օրինաց մի պատուիրանն լու
 ծանողն՝ պարտաւոր կը մնայ բովան
 դակ օրինաց : Ո՛չ թէ այս ինչ կամ այն
 ինչ պատուիրանն , կամ քանի մի պա
 տուիրաններ լուծանելու համար է ,
 որ մարդն Աստուծոյ հաղորդութենէն
 արտաքոյ կը մնայ . այլ կ'արող ենք
 ասել թէ արդէն արտաքոյ էր Աստու
 ծոյ հաղորդութենէն , երբ լուծեց կամ
 մեղանչեց նոյն պատուիրանաց դէմ :

Եւ ինչ մեղք որ մենք կը գործենք ,
 ճնուեղ և հետեւանք են այն մեղաց ,
 այն վիրաց , որ անդադար կը բացուի
 եւ կ'արիւննօտի մեր մէջ : Աստուած
 պէտք է թողու , պէտք է ներէ ինչպէս
 միոյն , իսկապէս և միւսոյն : Ի՞նչ պէտք

են մեզ թողութեան օրն , վայրկեանն ,
 եղանակն : Ի՞նչ պէտք է ասել թէ ժա
 մանակ արուած էր կամ արուած չէր
 բարի գործելու համար , քանի որ Աս
 տուած գիտէ , թէ նա՛ որ ժամանակ
 չ'ունէր գործելու , արդէն որոշած էր ,
 արդէն մօտ էր գործելու : Զեզ գործք
 պէտք են , գործք տիրաբար և բացար
 ձակապէս . բայց գերազանց գործ ,
 ազնիւ գործ , որ ամենէն դժուարինն
 է և հետեւապէս ամենէն արդիւնա
 ւորն , և այս գործն է , կ'ասէ Յիսուս
 Քրիստոս . “Հաւատալ Ա՛յն , զոր ա
 ռաքեաց Աստուած ” : Այս հոգեկան
 գործն , այս սրտի գործն կը պարունա
 կէ իւր մէջ կեանք , կ'արտադրէ կեանք ,
 կարժէ մի բովանդակ կեանք : Ուրեմն
 մի ասէք , մի դատապարտէք , թէ Ա
 ւետարանն շատ ներողամիտ է : Օրհ
 նեցէք Աւետարանն , որ ներողամիտ է
 ինչպէս ձեզ , նոյնպէս և այլոց համար :
 Բայց եթէ արդարեւ դուք կապուած
 էք օրինաց , զարմացմամբ ճանաչեցէք
 միանգամայն , որ շնորհքն բնաւ չը

ընթեր, չը տկարացնէր օրէնքն, վասն զի մի կողմէն յայտնապէս սրբագործած է զայն չարչարանօք Աստուածամարդոյն Յիսուսի, որ յանձն իւր գոհացոյց զարդարութիւնն յաւիտենական, և միւս կողմէն շորհքն այնպիսի մի սքանչելի սիրոյ սկզբունք կը դնէ քրիստոնէի սրտի մէջ, որով մարդ գլխովին կը պարտաւորի օրէնքն կատարել եւ այս սէրն իսկ, ըստ բանի Աւետարանին, է նպատակ և գլուխ պատուիրանաց և լրումն օրինաց :

Մեր ասածներէն յայտնապէս կ'երևի, որ իմաստութիւնն, այսինքն Աւետարանն, իւր խստութեան և քաղցրութեան կրբկնակի սկզբունքով, վարանած չէ ինքնին զինքն արդարացնելու համար, և ուրիշ գծուարին, կամ, աւելի լաւ է ասել, անհնարին արդարացում չը կայ, քան զայն վարդապետութեանց արդարացումն, որոնք ներհակ են Աւետարանին : Աւետարանն զինքն կ'արդարացընէ նա և ուրիշ եղանակաւ, զոր միայն ուշագիր նկատողներն կը նշմարեն :

Նայեցէք, զննեցէք, ամեն մարդ, ամեն ընկերութիւն, ամեն բարոյականութիւն, ամեն քաղաքականութիւն, որոց օտարօտի և անծանօթ մնացած է այս երկնային իմաստութիւնն : Նայեցէք և տեսէք թէ ի՞նչպէս կը շարժին, ի՞նչպէս կը գործեն աշխարհիս որդիքն, զուրկ բանականութենէ, զուրկ խաղաղութենէ, զուրկ երջանկութենէ : Նոցա անհաստատ վիճակն, նոցա տատանմունքն, նոցա խռովութիւնն, նոցա անվստահութիւնն, նոցա ներքին տաղնապն ու անձկութիւնն, վառք են Աւետարանին. վասն զի եթէ քննուի, եթէ հարցուի, թէ ինչո՞ւ համար տատանեալ, խռովեալ եւ թշուառ են, անպատճառ այս պատասխանն պիտի լուի : — Որովհետեւ քրիստոնէայ չեն : Բայց, եղբայրք, Յիսուս Քրիստոս մեր ուշագրութիւնն կը հրաւիրէ իմաստութեան միայլ արդարացուցման վերայ. աշխարհի ընդդիմութիւնն ներկայացնելէն զկնի, որ պիտի չընդունի իմաստութիւնն, ինչ ձեւով եւս ներ-

կայանայ , Յիսուս կը յաւելլու սոյն նշանաւոր խօսքերն , իբրեւ առարկայ միտիթարութեան վասն հաւատոյ , “ Բայց արգարացաւ իմաստութիւնն յորդուց իւրոց ” :

Մեր Տիրոջ սոյն ասացուածն “ Որ դիք իմաստութեան ” կը համապատասխանէ իսկապէս Յակովբոս Առաքելոյ հետեւեալ խօսքերուն . “ Մնաւ զմեզ բանիւ ճշմարտութեանն ” . Յակ . Ա . 18 : Քրիստոնեայք են որդիք իմաստութեան . իմաստութիւնն է մայր քրիստոնէից , իմաստութիւնն ճնաւ զնոսա ճշմարտապէս , կոչելով յանգոյութենէ ՚ի գոյութիւն : Արգ՝ պարտաւոր են ուրեմն որդիք արգարացուցանել իրենց մայրն , կամ , աւելի լաւ է ասել , Յիսուս կը հռչակէ արգէն իբրեւ գործ կատարեալ , թէ որդիք արգարացուցած են իրենց մայրն եւ հետեւապէս քրիստոնեայք միշտ պիտի լինին իբրեւ կենդանի եւ յաղթական ջատագովութիւն Քրիստոնեութեան : Քանի որ իմաստութիւնն

ամիտիտուած է միայն գրքի մէջ եւ միայն խօսքով կը խօսուի , կարելի է հաւանակիլ իմաստութեան եւ այնքան բանաւոր առարկութիւններն իսկ կարող չեն հաւանեցուցիչ երեւիլ եւ վարձ ստանալ : Միշտ վիճած են եւ միշտ պիտի վիճեն օրինաց եւ շնորհաց վերայ , Աւետարանի խտուրտեան եւ քաղցրութեան վերայ եւ այս վիճաբանութեանց մէջ վերջին խօսքն ո՛չ թէ առաւել ճշմարտին , այլ առաւել յաջողակին պիտի պատկանի : Բայց , երբ սոյն իմաստութիւնն ընդ ձեռն շնորհաց Աստուծոյ կը փոխադրի Քրքէն ՚ի մարդ , խօսքէն ՚ի կեանք եւ ՚ի գործ , այն ժամանակ աշխարհն կարող է իւր աչքով տեսնել եւ իւր ձեռքով շոշափել այն ճշմարտութիւնն , որ ոչ այլ ինչ էր իրեն համար , եթէ ոչ լոկ դըրութիւն : Յրկար ժամանակ կը վիճէիք զուք՝ թէ կարո՞ղ են արդեօք Ենորհչն եւ Օրէնչն միասին լինիլ : — Ահա՛ս այս մութիւնն իրականացած ձեզ նման մի մարդոյ մէջ : Վասն զի այս մարդն , որ

կը հաւատայ թէ ընդունած է յԱստուծոյ անդարձ և բացարձակ ներուզուծիւն, կը պահէ ընդ նմին նաև Աստուծոյ սուրբ Օրէնքն : Այս մարդըն, որ կը սանձէ իւր բոլոր մարմնաւոր յօժարութիւններն, որ խտրել կը ճնշէ իւր մարմինն, և որ իւր կամքն մի շարունակ զո՛հ կը համարի աստուածային կամայ, ընդ սմին կը ճաշակէ նաեւ սոյն քաղցրութիւնն, սոյն վտահութիւնն որ իւր փրկութիւնն իւր գործքերէն կախուած չէ, այլ 'ի ձրի շնորհացն Աստուծոյ : Երկար ժամանակ կը վիճէիք, որ իմանաք թէ Քրիստոնէութիւնն կ'ոչնչացնե՞տք արդեօք մարդոյ բնական գութն ու սէրն և կը ճընչէ՞ արդեօք մարդոյ սիրտն :— Ահա՛ ձեզ մի մարդ, որ մասն և բաժին ընտրած է իրեն համար զՅիսուս Քրիստոս եւ այն տեղ դրած է իւր սիրտն, ուր է իւր գանձն : Եւ սակայն այս մարդն է ամենէն դիւրամատչելին, ամենէն գրթոտն, ամենէն մարդասէրն եւ ամենէն ճշմարտապէս ընկերականն : Եր

կար ժամանակ կ'որոնէիք դուք, թէ կարելի է արդեօք, որ մարդ այնպիսի արտօնութիւն վայել է, զոր սակաւք 'ի մարդկանէ կը վայելեն, այնպէս վտահ լինի փրկութեան, որ սակաւք միայն կարեն վտահիլ, եւ սակայն այս առաւելութեան, այս արտօնութեան մէջ դարձեալ խոնարհ մնայ և երբէք չամբարտաւանի :— Ահա՛ ձեզ մի մարդ, որոյ ամենապիտաւոր յոյսերն աւելի զգալ կը տան իրեն իւր ոչնչութիւնն և ուրիշ ժամանակէ աւելի պատրաստ է զինքն այլոց տեղ գնել, խնդրել ինչոր կարող է ներողութիւն կամ պատիւ լինիլ այլոց, և միշտ ուրիշներն, ինչպէս եւս լինին, իւր անձնէն գերազանց համարիլ : Երկար ժամանակ կ'որոնէիք դուք, որ համուզուիք, թէ արդեօք քրիստոնէական հաւատն կարո՞ղ է ուրացնել տալ մեզ՝ մեր անձնականն և զմեզ գնել 'ի ծառայութիւն հանուր մարդկութեան : Բայց այս ամեն դատողութիւնն, թէ և իրաւացի և արդար, սակայն ձեք

տատանմունքն չէր վերջանար, այլ միշտ
անհաստատ էիք ձեր որոնման մէջ: —
Ահա՛ ձեզ մի մարդ, որ ուրախութեամբ
կը թողու ինչ որ ունի իւր եղբարց
ծառայելու համար: Նա ուրիշ փառք
չ'որոնէր, բայց միայն իւր եղբայրներն
ճշմարիտ քրիստոնէութեան և աստ-
ուածպաշտութեան մէջ հաստատել:
Նա ուրիշ ուրախութիւն չունի, բայց
միայն բարի առնել, և միայն Ստուծ-
մէ տեսնուիլ և ո՛չ ՚ի մարդկանէ: Նա
ուրիշ մտածութիւն չունի, բայց մի-
այն մարդասիրութիւն: Նա, երբ կը
տեսնէ թէ արժանի դատուած է չար-
չարիլ և հալածիլ Ստուծոյ արքայու-
թիւնն տարածելու և մարդկութեանն
օգնելու համար, կը հրճուի և կ'ուրա-
խանայ խոնարհութեամբ, և կը խնդրէ
յՍտուծոյ որ զինքն պահպանէ խիստ
հլութեան մէջ և զսպէ իւր մէջ ամեն
շարժումն հպարտութեան, անձնասի-
րութեան եւ կամապաշտութեան: Պէտք է
խոստովանիլ, եղբարք, որ
խնդիրն լուծուած է, դատման ժամա-

նակն անցած է, եւ իմաստութիւնն
արդարացած է: Սրբարայած է, կ'ասեմ,
վասն զի եթէ բովանդակ աշխարհի
մէջ, ո՛չ թէ բազում, այլ միայն մի
մարդ խել պատկերացնէ մեր նկարա-
գրած երեւոյթներն, դարձեալ իմաս-
տութիւնն արդարացած է: Թիւն նը-
շանակութիւն չ'ունի այս բանիս մէջ,
միայն թէ՛ եթէ սակաւ է, կ'ողբանք
մարդկային յիմարութեան վերայ, խել
եթէ բազում է, կ'օրհնենք զՍտուծած:
Ո՛չ միայն այսչափ, այլ համարձակ կա-
րող եմք ասել, որ եթէ մի հատ ճրչ-
մարիտ քրիստոնէայ միայն լինի աշխար-
հի մէջ, դարձեալ Քրիստոնէութիւնն
Քրիստոնէութիւն է, և այսու բնաւ
իւր ճշմարտութիւնն չը նուաղիր, և
դարձեալ իւրաքանչիւր որ յանցաւոր
կը դատուի չը հաւատարուն համար:
Բայց ահա՛ ձեզ մի մարդ, յորում քը-
րիստոնէութիւնն պատկերացած է ա-
մեն էական գծերով, ամեն զիծ կեանք
և ձեւ ունի, ամեն շարժում, ամեն
գործ քրիստոնէական շնչով և կենդա-

նութեամբ ոգեւորուած են: Մէք կ'ա-
 սեմք, որ սոյն մարդոյ մէջ քրիստոնէ-
 ութիւնն արդարացած է. վասն զի քր-
 իստոնէութիւնն նորա մէջ երեւցած
 է իրական և կարելի. վասն զի ճշմար-
 տած է, որ քրիստոնէութիւնն երեւա-
 կայական և անգործադրելի վարդա-
 պետութիւն չէ: Թող տասնաւոր, հա-
 ղիւրաւոր, հազարաւոր և բիւրաւոր
 լինին օրինակներն, այսու մեր յառաջ
 բերած միակ ապացոյցն աւելի զօրու-
 թիւն չըստանար, և իմաստութեան մի
 զաւակի մէջ դարձեալ իմաստութիւնն
 արդարացած է:

Այսպէս 'ի դորձ կը դնէ Հայրն հոգւոց
 իմաստութեան որդիներն: Ճշմարտու-
 թեան բանիւն իմաստութեան որդիքն
 ճնանելէն զինի, իբրև մի կենդանի բար-
 բառ և խօսք կը զրկէ զնոսա Ստուած
 յաշխարհ, իրենց կենաց տեսլեամբ, ի-
 րենց կենդանի օրինակաւ, քարոզ լինե-
 լու մարդկանց: Եթէ հարկ լինի, Հայրն
 հոգւոց կը դնէ նոցա բերանին մէջ
 փրկարար խօսքեր, կենաց Գրքէն բա-

ղուած ևւ մատակարարուած: Եթէ
 հարկ լինի, կը քաջալերէ նա իմաստու-
 թեան որդիներն քաղցրութեամբ ևւ
 պատուով պաշտպանել իրենց յոյն,
 վկայել ճշմարտութեան և հոգակել
 իրենց փրկութեան իրաւունքն: Եթէ
 համբ եւս լինին, եթէ չը խօսին, բա-
 ւական է իրենց կեանքն միայն: Շատ
 ճշմարիտ է թէ, սրչափ որ հաստա-
 տուն է կենաց ապացոյցն, այնչափ
 պատասխանատու են նոքա, որոնք չը
 հաւատացին, և երբ իմաստութիւնն
 այսպէս կ'արդարանայ, կը բառնայ այ-
 նուհետեւ ամեն ներումն իւր հակա-
 ուակորդներէն: Իմաստութեան որդ-
 ւոց կենդանի օրինակն աւելի շատ հո-
 գիներ դարձուցած է 'ի Քրիստոնէու-
 թիւն, քան թէ բանիւ քարոզութիւնն.
 այս կենդանի օրինակն է որ կը պատ-
 բաստէ հոգիներն քարոզն լսելու ուս-
 ման մէջ ընտելանալու և զգալի օգուտ-
 ներ քաղելու: Այն, երանի թէ ամեն
 քրիստոնէայ համոզուած լինէր, որ իր-
 մով պէտք է արդարանայ իմաստու-

Թիւնն, և եթէ ինքն իմաստութեան պաշտպանն կամ փաստաբանն չէ, աւանդ, նորա ամբաստանիչն է :

Գուք կ'ասէք թէ, նա իմաստութեան փաստաբան կը լինի, որովհետեւ նորա որդին է և արգէն գրքուած է, որ իմաստութիւնն պիտի արդարանայ իւր բոլոր որդիներէն : Բայց ինզիրն այս է, որ ճշդիւ իմացուի թէ արգեօք իսկապէս իմաստութեան որդի է : Նա կարող է իմաստութեան որդի լինիլ կամ չը լինիլ այն չափով, որչափ որ իւր կեանքն, իւր գործն զեմաստութիւնն կ'արդարացնէ կամ կը դատապարտէ : Արդ ի՞նչ կը նշանակէ իմաստութիւնն չը պաշտպանել, եթէ ոչ դատապարտել : Ոչ ապաքէն երբ մեր կեանքով չենք հաստատեր, չենք ապացուցաներ, որ քրիստոնէութիւնն ճշմարիտ է, կ'ապացուցանենք, որչափ որ կարող ենք, որ քրիստոնէութիւնն սոււտ է : Նւ որովհետեւ ինչ որ անենք, ինչ որ խորհինք, դարձեալ քրիստոնէութիւնն ճշմարիտ է ինքնին, այս տեւ

ղէն կը հետեւի, որ մենք ոչ թէ ամբաստանիչներ, այլ ուղղակի զրպարտիչներ և չարախօսներ ենք Քրիստոնէութեան դէմ : Ոչ ապաքէն պարտինք յիշել, որ սոյն զրպարտիչ չարախօս անունն Սատանայի յատուկ անունն է :

Բայց պիտի ասէք դուք, եղբարք, թէ այս զրպարտութիւնն, այս չարախօսութիւնն ակամայ է . կը համաձայնիմ : Սակայն կը կասկածիմ, որ մի գուցէ ահամայ ասելով շատ հանդարտեցնէք զձեզ, և ձեր սրտի խորոց մէջ կամաւոր առիթներ գանուին : Պիցուք թէ բնաւ երբէք յօժարութիւն և կամք չունենաք այսպիսի վատ և անգոնելի նպատակի համար : Բայց գիտէք թէ, քանի անգամ որ քրիստոնէութիւնն վտանգի մասնած էք, քանի անգամ որ արհամարհանաց ենթարկած էք ձեր մարմնաւոր յօժարութենէն յառաջ եկած անարգ գործերով կամ ցոյցերով միթէ ձեր կամքն մասնակցութիւն ունեցած չէ, միթէ ձեր կամքն անգործ

մնացած է : Ազատ էլիք դուք , թէ ազատ չ'էիք . ընտրուածիւն արիք , թէ չ'արարիք աշխարհի ծառայութեան և Աստուծոյ փառաց մէջ : Արդեօք չը կամեցա՞ք երբէք անարգել կամ անգոսնել իմաստութիւնն : Բայց յարգել և պատուել կամեցա՞ք արդեօք : Կարո՞ղ էք յուսալ արդեօք , որ Աստուած 'ի կշիւ կը դնէ զինքն պատուելու սոյն ընդհանուր , անպտուղ և անզոր կամքըն այն կամաց հետ , որով հազարաւոր և բիւրաւոր անգամ խոտորած էք 'ի չարն և իրօք և էպպէս գործադրած էք ձեր կամքն : Ա'խ , քանի որ կը տեսնուի թէ ձեր կամքն բարութեան և ո՛չ մի պտուղ ունի , իսկ չարութեան պտուղ անթիւ , ի՞նչպէս կարելի է ասել թէ ախմայ է չարախօսութիւնն ընդդէմ իմաստութեան , ընդդէմ Աւետարանի :

Ո՛վ Աստուած իմ , միթէ երբէք պիտի չըզգանք , որ մեր ասկերս , թէ և ո՛չ բոս օրինակի Յիսուսի Քրիստոսի , այլ ուրիշ եղանակաւ , միշտ պատճառ

էնք այլոց գլորման կամ կանգնման : Միթէ պիտի չ'ըզգանք , որ կամաւ թէ՛ ախմայ մենք միշտ կը ծնանինք մեր կենաց նման կեանքեր , մեր գործոց նման գործեր : Ա'խ , եթէ կարենայինք մի առ մի մեր աչաց առջեւ ներկայուցնել , թէ՛ անցելոյն և թէ՛ ապագային մէջ , այն սերունդներն որք մեր օրինակներէն կը ծնանին : Եթէ կարենայինք հաշուել այն հոգիներն , որք թէ՛ մեր կենդանութեան ժամանակ և թէ՛ մեր մահէն զինի , իրաւունք պիտի ունենան բողբոջել մեր դէմ և մեծաւ մասամբ մեզ վերագրել ինչ որ եղած են իրենք , ի՞նչպիսի սոսկումն պիտի պաշարէր զմեզ և ի՞նչպէս կարօտութեամբ և միանգամայն սուրբ նախանձաւորութեամբ և ուրախական յուսով պիտի ստիպուէինք Աստուծոյ օղորմածութեան և գթութեան գիրկն անկանիլ :

Իմաստութիւնն արդարացած է իւր բոլոր օրգիւններէն : Յիսուս Քրիստոս ինքն ասած է այսպէս : Ուրեմն յառաջքան զՅիսուս և ամեն ժամաւ

նակ իմաստութեան որդիքն կատարած են այս բարեպաշտական պտուղն առ իւրեանց մայրն և այսու ճանաչուած են, որ իմաստութեան որդիք են : Ո՛վ սուրբ մարդիկ, դուք որ ընտրեալ ժողովրդի (Իսրայէլեան Ազգի) ծոցին մէջ, կամարտաբոյ, հռչակեցիք ձեր անուններն հաւատարմութեամբ, դուք արդարացուցիք իմաստութիւնն : Ո՛վ դուք աւելի բազմութիւ արք եւ կանայք, որք հաւատարիմ եղաք ձեր մասնաւոր անշուք վիճակին մէջ, եւ նաեւ ձեզմէն շատերն՝ նոյն իսկ գերութեան եւ աղքատութեան դժընդակ դառնութեանց մէջ հաւատացեալ մտացին, դուք արդարացուցիք իմաստութիւնն : Ճակատս խոնարհեալ կ'անցնիմ քո առջեւէն, ո՛վ Աստուածամարդդ Յիսուս, որ իմաստութիւնըն արդարացնելէն աւելի մեծ բան արիր, որ նոյն իսկ իմաստութիւն եղար, և կը կանգնիմ ձեր առջեւ, ո՛վ Աւաքեալք Յիսուսի Քրիստոսի, ո՛վ ուսուցիչք իմ և եղբարք, ձեր առջեւ,

ո՛վ մարտիրոսք և հաւատացեալք աւմենայն ժամանակաց և տեղեաց, ձեր առջև, ո՛վ նշանաւոր կամ աննշան քրքիստոնեայք, յայտնիք և անյայտք, որ փայլեցուցիք ձեր լյսն ձեր շուրջ, թէ և երկու քայլ միայն հեռաւորութեամբ : Կը կանգնիմ ձեր առջև, ո՛վ հաւատացեալք մեր ժամանակի, որք քրիստոնէական կենաց կանոնաւոր, խաղաղ և հեղ գործողութեան մէջ, անտես 'ի մարդկանէ, կ'ուրախացնէք հրեշտակներն երկնքի մէջ, վասն զի դուք եւս ձեր յատուկ ձեւով և միջոցներով կ'արդարացնէք իմաստութիւնն : Օրհնեալ լինիք դուք ամենեքեան : Եղէք մեզ օրինակ և քաջալերութիւն : Երբ յամենուստէք, և աւելի յանդուգն կերպիւ, նորանոր անուններու տակ, ծնանին այն ամեն աղանդներն և կուսակցութիւնքն, որք Յիսուսի Քրիստոսի և իւր Աւաքելոց խաչերն անկեցին, երբ անհաւատութիւնն ժողովէ իւր բոլոր զօրութիւնն և իւր ծայրայեղ չափազանցութեան հասնի : Երբ ան

հաւատութիւնն , գիտութեան ամեն
 դաւառներէն ուրուական յնորքներ և
 մտացածին խորհրդներ յառաջ կոչէ
 ընդդէմ յաւիտենական Աւետարանին ,
 երբ դուք ողբաք և աշխարհն չը կոծէ
 եւ չ'արտասուէ . երբ դուք ցնծու-
 թեան օրհնութիւններ և երգեր նու-
 ապէք և աշխարհն , իրիտանակ ձա-
 նակցելու , պատասխանէ ձեզ քամահ-
 րական ժպիտով , միտք բերէք յայն-
 ժամ եւ քննեցէք այն խօսքն , որով
 կը կնքէ մեր Տէրն իւր Վճիռն , եւ ա-
 սացէք նորա հետ . « Ամեն ժամանակ
 իմաստութիւնն արդարացած է իւր
 որդիքներէն և միշտ պիտի արդարա-
 նայ : Խօսեցէք որպէս քրիստոնեայ ,
 բայց յաւէտ ապրեցէք որպէս քրիս-
 տոնեայ : Ամեն իմաստակութեանց ,
 ամեն նուրբ ճարտարամտութեանց
 դիմագրեցէք ձեր կեանքն , պատաս-
 խանեցէք ձեր կեանքով : Ծանուցէք ,
 ցուցէք Քրիստոնէութեան մէջ ո՛չ մի
 այն վարդապետութիւններ , այլ մի
 կենդանի գործ , անմերժելի գործ եւ


յաւիտենական իրողութիւն : Ո՛վ Աս-
 տուած , մեզմով արդարացո՞ւ զքեզ . և
 որովհետեւ կամեցար դու , որ մեզմէն
 իւրաքանչիւր որ Աւետարանի մի կեն-
 դանի օրինակ , մի կենդանի տիպար
 լինի իւր եղբօր համար , ո՛վ Աստուած ,
 գիր սոյն Աւետարանն մեր սրտերու
 մէջ . գիր մեր սրտերու մէջ մի հօր
 եւ անպառ բաղձանք Աւետարանն
 փառաւորելու համար : Այնպէս արա՛ն ,
 ո՛վ Աստուած , որ կարգան մարդիկ
 մեր մէջ , ինչպէս Աւետարանի մէջ ,
 խաղաղութիւն , խոնարհութիւն ,
 քաղցրութիւն , մարդասիրութիւն :
 Այնպէս արա՛ն , որ իմաստութիւնն ,
 մեր օրինակաւ արդարանալով , շահի ,
 ստանայ աշխարհի մէջ բաղմամբիւ նոր
 որդիներ :



The first part of the paper is devoted to a
 general consideration of the subject, and
 to a statement of the objects of the
 present inquiry. It is then divided into
 three parts, the first of which is
 devoted to a description of the
 objects of the inquiry, the second
 to a description of the methods
 employed, and the third to a
 description of the results. The
 first part is divided into two
 sections, the first of which is
 devoted to a description of the
 objects of the inquiry, and the
 second to a description of the
 methods employed. The second
 part is divided into two sections,
 the first of which is devoted to
 a description of the results, and
 the second to a description of the
 methods employed. The third part
 is divided into two sections, the
 first of which is devoted to a
 description of the results, and the
 second to a description of the
 methods employed.

The second part of the paper is devoted to a
 description of the objects of the inquiry,
 and to a statement of the objects of the
 present inquiry. It is then divided into
 three parts, the first of which is
 devoted to a description of the
 objects of the inquiry, the second
 to a description of the methods
 employed, and the third to a
 description of the results. The
 first part is divided into two
 sections, the first of which is
 devoted to a description of the
 objects of the inquiry, and the
 second to a description of the
 methods employed. The second
 part is divided into two sections,
 the first of which is devoted to
 a description of the results, and
 the second to a description of the
 methods employed. The third part
 is divided into two sections, the
 first of which is devoted to a
 description of the results, and the
 second to a description of the
 methods employed.

Faint, illegible text, possibly bleed-through from the reverse side of the page.



1208

«Ազգային գրադարան»



NL0331428

«Ազգային գրադարան»



NL0331427

«Ազգային գրադարան»



NL0331426

«Ազգային գրադարան»



NL0331425

«Ազգային գրադարան»



NL0331423

«Ազգային գրադարան»



NL0331422

«Ազգային գրադարան»



NL0331421

«Ազգային գրադարան»



NL0331420

